Արգելոցապարկային համալիր

«Էրեբունի» պետական արգելոց

Ստեղծվել է 1981 թ-ին, գտնվում է Կոտայքի մարզում, Գեղադիր և Մուշավան գյուղերի սահմաններում, սահմանակից է Երևանին:

Արգելոցը ստեղծվել է վայրի ցորենների և նրանց վայրի ազգակիցների պահպանության նպատակով, մասնավորապես իր տեսակների բազմազանությամբ ամենահետաքրքիր վայրն է աշխարհում: Ստեղծման գործում մեծ ավանդ են ունեցել պրոֆեսոր Մ.Գ. Թումանյանը և ակադեմիկոս Ն.Ի. Վավիլովը:

Կարմիր գրքում գրանցված են 15 տեսակ:
Տարածքը՝ 118,75 հա:
Գտնվում է ծովի մակարդակից 1300մ-1400մ բարձրության վրա:
Կլիման՝ լեռնատափաստանային և կիսաանապատային:

Իջևանի Դենդրոպարկ

Ստեղծվել է 1962թ-ին, Տավուշի մարզ, Իջևան քաղաք, Աղստև գետի աջ ափին:
Տարածքը՝ 14.62 հա, ռելիեֆը՝ բարենպաստ, տարածվում է լանջով:
Կլիման՝ կիսաչոր մերձարևադարձային, չափավոր ցուրտ ձմեռներով:
Ծառաթփատեսակները՝ մոտ 550 տեսակ:
Այստեղ է գտնվում արջատխլենու ծառուղին, դենդրոպարկի հիմնադրման գործում մեծ ավանդ ունի անտառագետ Լյուդվիգ Սայադյանը:

«Որդան կարմիր» պետական արգելավայր

Տարածքը՝ 219.85 հա:

Ռելիեֆը՝ հարթավարային, սարահարթ, լանդշաֆտը՝ կիսաանապատային, տափաստանային:
Ստեղծվել է 1987թ-ին, Արմավիրի մարզում, Արազափ, Արգավանդ և Եղեգնուտ գյուղերի միջև, աղուտային հողերում: Հանդես է գալիս 2 տեղամասերով (Արազափ և Ջրառատ): Որդան կարմիրը Հայկական լեռնաշխարհում հազարամյակների ընթացքում հանդիսացել է բնական կարմիր ներկի՝ կարմինի աղբյուր: Այս ներկը լինելով «թագավորական» ներկ, բարձր է գնահատվել ոչ միայն Հայաստանում, այլ նաև Մերձավոր Արևելքում և Եվրոպայում:
Այս բնական բարձրարժեք ներկը օգտագործվել է մանրանկարչության, բժշկության, սննդի, թեթև արդյունաբերության և այլ ոլորտներում: Միջատը բնակվում է աղուտ հողերում և հողի մակերես է դուրս գալիս սեպտեմբեր ամսվա սկզբներին:

Վանաձորի <<Սարուխանյանի Ժ. անվան>> դենդրոպարկ

Ստեծվել է 1936թ-ին, Լոռու մարզ, քաղաք Վանաձոր:
Տարածքը՝ 1.944 հա, կլիման՝ բարեխառն:
Ծառաթփատեսակները՝ մոտ 110 տեսակ:
Դենդրոպարկում է պահպանվում հանրապետությունում եզակի մասնագիտական գրադարանը:

Բերդի «Սորաններ» դենդրոպարկ

Ստեղծվել է 1962թ-ին, Տավուշի մարզ, Բերդ քաղաքի մոտակայքում: Տարածքը՝ 62 հա, ռելիեֆը՝ լեռնամարգագետնային, կլիման՝ բարեխառն: Ծառաթփատեսակները՝ 141 տեսակ: Հիմնադրման գործում մեծ ավանդ է ունեցել Հ.Ա. Ավագյանը

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Ստեղծվել է 1933թ-ին, գտնվում է Լոռու մարզում, գ. Գյուլագարակ:
Տարածք՝ 35 հա, ռելիեֆը՝ բլրոտ, գոգավոր, կլիման՝ բարեխառն-խոնավ և զով ամառներով, չափավոր ցուրտ ձմեռներով: Ծառաթփատեսակները՝ մոտ 460 տեսակ:
Հիմնադրման գործում մեծ ավանդ ունի ազգությամբ լեհ անտառագետ-Էդմոնդ Լեոնովիչը:

Տոմսի արժեքը կազմում է 200 դրամ

«Ջրվեժ» անտառպարկ

Ստեղծվել է 1977թ-ին, գտնվում է Կոտայքի մարզում, գ. Ջրվեժ:
Տարածքը՝ 423.8 հա, ռելիեֆը՝ խիստ կոտրատված, բլրոտ, տեղ-տեղ ձորակներով: Լանդշաֆտները՝ կիսաանապատային, տափաստանային, լեռնատափաստանային: Ծառաթփատեսակները՝ 130 տեսակ, <<Կարմիր գրքում>> գրանցված են 17-ը: Անոթավոր բույսեր՝ 412տեսակ: Հիմնադրման գործում մեծ ավանդ է ունեցել Հ.Ա. Ավագյանը

«Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ

ՀՀ Տավուշիմարզ, գյուղ Կողբ

«Զիկատար» բնապահպանական կենտրոն ՊՈԱԿ-ը (նախկինում «Անտառային գիտափորձարարական կենտրոն») ստեղծվել է 2002թ:

«Զիկատար»բնապահպանական կենտրոնն իրականացնում է բնապահպանության ոլորտի գիտահետազոտական, էկոկրթական գործունեություն, ինչպես նաև էկոտուրիզմի ծառայությունների մատուցում:



Էկոտուրիստական երթուղիներ

Առաջարկվող 4 երթուղիները սկսվում են Կողբի մշակույթի կենտրոնից, որտեղ գտնվում է գյուղի պատմության թանգարանը և արվեստի դպրոցը:



Երթուղի N 1. Մշկավանքի տարածք

Կողբ գյուղի մշակույթի կենտրոնից, որի սրահներից մեկում գործում է գյուղի պատմության թանգարանը, դեպի Նոյեմբերյանի անտառտնտեսություն տանող կենտրոնական փողոցով ուղևորվեք մինչև գյուղի վերջը: Այնտեղից ճանապարհը թեքվում է դեպի ձախ և զառիվեր բարձրանում անտառապատ սարի գագաթ: Այնտեղ՝ ընդարձակ բացատում է գտնվում իր ճարտարապետական լուծումներով եզակի Մշկավանքը: Վանքի շրջակայքում կան սառնորակ աղբյուրներ, կառուցված են տաղավարներ: Տարածքը հարուստ է վայրի հատապտուղներով (վայրի տանձ, վայրի խնձոր, մոշ, հոն, մասուր, զկեռ, ընկույզ և այլն):

Վանքից 300մ հեռավորության վրա գտնվում է խաչքարերով հարուստ հին գերեզմանատունը:

Երթուղին նպատակահարմար է ինչպես պատմամշակութային, այնպես էլ ռեկրեացիոն էկոտուրիզմի սիրահարների համար: Երթուղու երկարությունը 4կմ է: Երթուղին կարելի է անցնել ոտքով, ձիով կամ բարձր անցողականությամբ ավտոմեքենայով:

Երթուղի N 2. «Զիկատար»արգելավայր

Ուղևորվեք Կողբ գյուղի մշակույթի կենտրոնից դեպի Նոյեմբերյանի անտառտնտեսություն տանող կենտրոնական փողոցով մինչև գյուղի վերջը:

Այնտեղ հին գյուղատեղին է, պահպանվել են եկեղեցու ավերակները, միջնադարյան գերեզմանատունը: Կողբ գետի ձախ ափով խճապատ ճանապարհը շարունակվում է դեպի արևմուտք: Երթուղու 5-րդ կիլոմետրում է գտնվում VI դարում կառուցված Տվարագեղցի կիսավեր եկեղեցին: Այն վաղ միջնադարյան եռանավ բազիլիկ է: Կանգուն է արևելյան պատը, խորանի գմբեթարդի զգալի մասով: Մյուս կողմերում պատերի մի մասը պահպանվել է տարբեր չափերով: Եկեղեցու շուրջը հին գերեզմանոց է: Ճանապարհաշինության ժամանակ բացվել և ի հայտ են եկել քարարկղայի նգերեզմաններ:

Երթուղու 7-րդ կիլոմետրից ճանապարհը թեքվում է ձախ, կտրում-անցնում Կողբ գետը և բարձրանում մինչև գագաթը՝ անտառապատ Զիկատար սարը (1665մ): Զիկատարի հյուսիսային լանջին է գտնվում 150 հա տարածք զբաղեցնող արգելավայրը և Զիկատար անտառի ուսուցման տարածաշրջանային կենտրոնը: Կենտրոնն ապահովված է համակարգիչներով, հեռախոսակապով, գործում են գրադարանը, ճաշարանը: Ստեղծված են հանգստի և աշխատանքի համար լավագույն

պայմանները: Տեղանքն ունի անկրկնելի գեղեցկություն: Այստեղ աճում են հյուսիս-արևելյան Հայաստանին բնորոշ գրեթե բոլոր ծառաթփատեսակները: Տարածքում է գտնվում Զիկատարի հին դամբարանը:

Երթուղու երկարությունը 10 կմ է: Կարելի է գնալ տրանսպորտային բոլոր միջոցներով:

Երթուղի N.3. Կենու պուրակ

Շարժվեք Կողբի մշակույթի կենտրոնից դեպի Երևան տանող մայրուղով մինչև Ոսկևան գյուղի խաչմերուկը: Այնուհետև ճանապարհը թեքվում է դեպի ձախ, Ոսկևան և Կոթի գյուղերի միջով մինչև Բարեկամավան գյուղը, որից 800մ դեպի հարավ-արևմուտք 1 հեկտարի վրա աճում է հանրապետությունում եզակի բնական ջոնջոլենին: Տարածքից ոչ հեռու է գտնվում Սուրբ Բարձրյալ նշանավոր մատուռը: Նույն ճանապարհով վերադառնալով մինչև Ոսկևանի խաչմերուկը՝ երթուղին շարունակվում է երևանյան մայրուղով մինչև Ոսկեպար գյուղը: Ոսկեպարից 3կմ արևմուտք՝ Ոսկեպար գետի ձախ ափին է •տնվում կենու (կարմրաձառ) պուրակը: Շրջակայքը հարուստ է բարձր լրիվության անտառներով:

Ոսկեպար գյուղում է գտնվում նշանավոր Սուրբ Աստվածածին եկեղեցին (VI-VIIդդ.), մոտակայքում կան միջնադարյան ամրոցի ավերակներ (IX-XIIդդ.):

Երթուղու երկարությունը 50 կմ է: Երթուղին կարելի է անցնել տրանսպորտային միջոցներով:

Երթուղի N 4. «Խեչքար» տեղամաս

Կողբի մշակույթի կենտրոնից Այրում կայարան տանող ճանապարհով 6 կմ անցնելուց հետո, «Հայոց օջախ» ռեստորանի մոտ ճանապարհը թեքվում է դեպի արևմուտք (500մ): Այստեղ գտնվում է բնության հուշարձանների ցանկում ընդգրկված շուրջ 800 տարվավ աղեմության նշանավոր Սոսու ծառը: Այս տարածքում կան բազմաթիվ աղբյուր-հուշարձաններ, որոնք հանգստի ու ժամանցի անցկացման հարմարավետ վայրեր են: Շրջակայքը հարուստ է հատկապես հոնի տեսակով: Երթուղին, թեքվելով դեպի հարավ, անտառմիջյան ճանապարհով շարունակվում է մինչև Վարդի գյուղ տեղամասը: Այստեղ է գտնվում Սուրբ Գևորգ մատուռը: Շարունակելով անտառմիջյան ճանապարհով մինչև Խեչքար տեղամասը՝ երթուղին թեքվում էդեպի արևելք, այն է՝ Կողբ գյուղ:

Երթուղու երկարությունը 22 կմ է:

Երթուղին կարելի է անցնել բարձր անցողունակության ավտոմեքենայով: